ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ

№2016-3-1-Ա

ք. Երևան 11.04.2016թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2016 թվականի ապրիլի 11-ի նիստում քննարկեց 2016 թվականի փետրվարի 2-ին արտոնագրային հավատարմատար Զարուհի Մանուկյանի կողմից ներկայացված՝ Քոսթ Ռիսրչ ԷլԷլՍի ընկերության (1209 Orange Street Wilmington DE 19801) «CALIFORNIA» (IR1190529) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Ապրանքային նշանի գրանցումը մերժվել է հետևյալ հիմքերով.
«Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի համաձայն որպես ապրանքային նշան գրանցման ենթակա չէ այն նիշը, որը սպառողներին կարող է մոլորության մեջ գցել ապրանքների կամ ծառայությունների աշխարհագրական ծագման, դրանց որակի, բնույթի կամ արտադրողի վերաբերյալ հարցերում: Տվյալ դեպքում ապրանքային նշանը չի կարող գրանցվել քանի որ այն պարունակում է «CALIFORNIA» բառը, որը սպառողներին կարող է մոլորության մեջ գցել ապրանքների աշխարհագրական ծագման, դրանց որակի, բնույթի կամ արտադրողի վերաբերյալ հարցերում:

Կոլեգիայի նախագահը բողոքարկման խորհրդի քննարկմանը ներկայացրեց բողոքի նախնական քննարկման արդյունքները՝ բողոքն ամբողջությամբ բավարարելու, կրկնական փորձաքննության որոշումն ամբողջությամբ չեղյալ ճանաչելու և ապրանքային նշանի հայտով գործավարությունը շարունակելու վերաբերյալ, քանի որ որոշումն ամբողջությամբ հիմնավորված չէ, ինչպես նաև հաշվի չեն առնված «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի որոշ դրույթներ, որոնք վերաբերում են տարածքի անվանումներ հանդիսացող ապրանքային նշանների փորձաքննությանը:

Բողոքարկողը չառարկեց կոլեգիայի կարծիքին:

Փորձաքննության բաժնի պետը նույնպես համաձայնվեց կոլեգիայի առաջարկի հետ:

Քննարկման արդյունքում համաձայնվելով կոլեգիայի նախնական կարծիքի հետ, և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2012 թվականի նոյեմբերի 8-ի N1501-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհրդում բողոքների քննարկման կարգի» 71-րդ կետի 1-ին ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը.

Ո Ր Ո Շ Ե Ց

Բողոքն ամբողջությամբ բավարարել, կրկնական փորձաքննության որոշումն ամբողջությամբ չեղյալ ճանաչել և «CALIFORNIA» (IR1190529) ապրանքային նշանի հայտով գործավարությունը շարունակել:

Բողոքարկման խորհրդի որոշումը կարող է վիճարկվել դատական կարգով ՀՀ վարչական դատարանում՝ դրա ստացման օրվանից վեցամսյա ժամկետում:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՆԱԽԱԳԱՀ ԳԱՐԵԳԻՆ ՄԵԼՔՈՆՅԱՆ